



Արտակարգ
Պատուանշան

Ծառայութեան
Շքանշան

Արժանեաց Շքանշան

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ
ԵՒ ՓՐՈԹՈՔՈՒԱՅԻՆ
ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Այս գրութեամբ ներկայացուած փրոթոքոլային ցուցմունքները կը թելադրուին Հ.Ս.Ը.Ս.էն ներս օրըստօրէ աճելու հակամետ միութենական, ազգային եւ եկեղեցական նուիրապետական կարգերը խախտող երեւոյթները կանխելու պահանջէն, ինչպէս նաեւ՝ ներ-միութենական մեր կենցաղավարութեան մէջ անբողջական կարգապահութիւն հաստատելու կարելութիւնը շեշտելու մտահոգութենէն:

Փրոթոքոլային կարգերու անտեսումը մեր միութիւնը կ'առաջնորդէ դէպի անբոխային եւ անիշխանական վիճակ, մինչ անոնց հանդէպ ցուցաբերուած բժախնդրութիւնն ու յարգանքը անոր կու տան քաղաքակիրթ վարքով, ազգային հասարակական ընդունուած արժէքներուն գիտակից կազմակերպութեան մը վարկ: Կարգ ու կանոնի հանդէպ յարգանքը անվիճելի գրականն է մեր միութեան յառաջդիմութեան ու զօրացման: Ամէն երկիր ունի իր սահմանադրական օրէնքները, որոնց համաձայն կը ղեկավարուին ժողովուրդները, սակայն ունին նաեւ փրոթոքոլային կարգ ու սարք: Պատշաճութիւններու եւ պաշտօնական վերաբերմունքներու

խախտումով եւ անտեսումով՝ կը յառաջանայ անկազմակերպ երեւոյթ եւ կարգավիճակ:

Հ.Մ.Ը.Մ. ունի իր կանոնագիրը, որուն տրամադրութիւնները կարելի բժախնդրութեամբ կը գործադրուին միութեան կեանքէն ներս: Բայց կանոնագիրը փրոթոքոլային հասկացողութեամբ կանոններ չի բովանդակեր իր մէջ: Փոխադարձ յարգանքի արտայայտութիւնը ծրնունդն է մեր կանոնագիրին պարտադրած օրէնքներուն եւ մեզի փոխանցուած է աւանդաբար, մեր նախորդող սերունդներէն:

Վերոյիշեալ մտահոգութիւններէն առաջնորդուած՝ Կեդրոնական Վարչութիւնը անհրաժեշտ գտաւ ներկայ ուղեցոյցին պատրաստութիւնը, այն խոր համոզումով, որ անոր անթերի գործադրումը, անկասկած, նոր վերելք մը պիտի ապահովէ մեր միութեան:

Արդ, Հ.Մ.Ը.Մ.ի կենցաղավարական եւ փրոթոքոլային զոյգ հասկացողութիւնները ճշդորոշող այս ուղեցոյցը նպատակայարմար կը գտնենք ներկայացնել երկու ենթաբաժանումներով:

Առաջին՝ փրոթոքոլային ներքին համակարգ, որ կ'առնչուի միութեան ներքին օրկանական կեանքին հետ:

Երկրորդ՝ փրոթոքոլային արտաքին համակարգ, որ միութեան արտաքին կեանքին ընթացքը կը հունաւորէ:

Ա. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԻ ՓՐՈԹՈՔՈԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ժողովներու, ձեռնարկներու թէ միութենական այլ հանդիպումներու առիթով, Հ.Ս.Ը.Ս.ի գերագոյն մարմին Կեդրոնական Վարչութենէն սկսեալ, նուիրապետական կարգով, գերադաս դիրքի վրայ գտնուող բոլոր վարչութիւնները եւ յանձնախումբերը իրենց հանգամանքին համապատասխան յարգալիր վերաբերումի պէտք է արժանան` ստորադաս դիրքերու վրայ գտնուող բոլոր վարչութիւններու, յանձնախումբերու եւ անհատ միութենականներու կողմէ:

Գերադաս մարմինի մը բոլոր անդամները, անխտիր, համահաւասար իրաւունքներ ունին եւ առ այդ յարգանքի կ'արժանանան ներքին ամէն տեսակ ձեռնարկներու առթիւ, ըլլան անոնք ժողովներ, հանդիպումներ կամ հաւաքոյթներ, երբ ներկայ են ի պաշտօնէ կամ անպաշտօն:

Գերադաս մարմինի մը կազմին կողմէ տըր-լաժ հաւաքական այցելութեան մը պարագային, յարգանքի արտայայտութիւնը պէտք է ըլլայ լրիւ կազմին եւ հանգամանքներու համապատասխան դասաւորումով (*ատենապետ, փոխ-ատենապետ, ատենադպիր, գանձապահ եւ այլն*):

Երբ գերադաս մարմինի անդամը ներքին ձեռնարկի մը ներկայացուցիչի հանգամանք ունի, առաջնահերթ կարելորութեամբ կը յարգուի:

Հ.Ս.Ը.Մ.ականը ինքն իրեն պարտադիր կը դարձնէ հետեւեալ կարգախօսը.-

1. ՅԱՐԳԱՆՔԸ ԿԱՄ ՊԱՏԻՒՐ, ՈՐ Կ'ԱՐՏԱՅԱՅՏՈՒԻ, Կ'ՈՒՂՂՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՆ ԵՒ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻՆ:

2. Հ.Ս.Ը.Մ.Ի ՆԵՐՔԻՆ ԹԷ ԱՐՏԱՔԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՆ, ՅԱՐԳԱՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԵՐԹԱՅ Հ.Ս.Ը.Մ.Ի ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՆ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐՈՒՆ, ՄԻՇՏ ՊԱՀԵԼՈՎ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԸՆԹԱՅՔԸ: ԲԱՅԱՌԵԼԻ ԵՆ ՄԻԱՅՆ ՀՈՎԱՆԱԲՈՐԻ ԿԱՄ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ:

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ

Միութենական օրինակութեան ընթացքը կը թելադրէ, որ գերադաս եւ ստորադաս մարմիններու միջեւ տեղի ունեցող բանաւոր եւ յատկապէս գրաւոր փոխ-յարաբերութեան ընթացքին ամենայն բժախնդրութեամբ յարգուին յարաբերական կարգերը: Նամակ, բողոքագիր, փոխանցում եւ այլ կարգի յարաբերական կապերը պարտաւոր են ունենալ պատշաճ ոճ եւ ճիշդ տեղին գործածել ընկալեալ որակումները (ներքին իմաստով, *Պատուարժան`* գերադաս մարմիններու պարագային, *Մեծայարգ`* անձերու պարագային): Նամակի կամ այլ տեսակի գրու-

թեան մը տակ (դարձեալ ներքին իմաստով) ատենապետը կը ստորագրէ աջ կողմը, իսկ ատենադպիրը՝ ձախ կողմը:

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Ստորադաս մարմինի մը կողմէ կազմակերպւած ընկերային կամ պաշտօնական որեւէ տեսակի ձեռնարկի մը, գերադաս մարմինէն ներկայ անդամներուն իրենց հանգամանքին համապատասխան վերաբերում պէտք է ցուցաբերել, նոյնիսկ եթէ ձեռնարկը ունի հովանաւոր կամ նախագահ, կամ Կեդրոնական Վարչութեան մէկ անդամը եթէ նոյնիսկ ունի ներկայացուցիչի հանգամանք:

Պարագայական-անհատական հանդիպումի մը առթիւ կամ հանրային շրջանակներու մէջ, պայման է, որ ստորադասի եւ գերադասի կեցւածքները եւ արտայայտութիւնները յարգեն պատշաճութեան սահմանները:

Կենցաղագիտութեան հասկացողութեան սահմաններուն մէջ կ'իյնան նաեւ գրաւոր յարաբերութեան կարգ ու պատշաճութեան յարգումը, ինչպէս՝ ատենագրութիւններու օրինաւոր պատրաստութիւն եւ օրինաւոր աւարտը, նամակի մը հասցէագրումի ճիշդ ձեւը, արձանագրութիւններու մէջ նուիրապետական շարքի պահպանումը եւ այլն... (գերադասէն ստացուած նամակը առաջնահերթ կարգով յիշատակել, այսինքն՝ գրել՝ *Յ.Մ.Ը.Մ.ի Պատուարժան Վարչութիւն*):

Բ. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՐԳԻ ՓՐՈԹՈՔՈԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հ.Մ.Ը.Մ.ի գործունեութեան փրոթոքոլային արտաքին հասկացողութեան ծիրին մէջ կ'իյնան առաւելաբար հրապարակային, այսինքն՝ դաշտերու կամ սրահներու մէջ տեղի ունեցող ձեռնարկները, կամ պաշտօնական հանդիպում-հիւրասիրութիւնները:

1. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ՝ ԴԱՀՏԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ

Դաշտի մէջ տեղի ունեցող հանդիսութեան պարագային, փրոթոքոլային կանոնները կը կիրակուին յատկապէս դաշտի մուտքին եւ պատուոյ թրիպիւնին շրջագիծին մէջ:

Ա. ԴԱՇՏԻ ՄՈՒՏՔԻ

ՓՐՈԹՈՔՈԼԱՅԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ

Մուտքին՝ ձեռնարկի կազմակերպիչ մարմինին ներկայացուցիչը կ'ըլլայ պատուոյ հիւրերը դիմաւորող գլխաւոր ընդունողը, ապա՝ պատուոյ հիւրերը կ'առաջնորդուին իրերայաջորդող ընդունողներով՝ մինչեւ պատուոյ թրիպին:

Մուտքին՝ դրան երկու կողմերը, երկշարք սկաուտական շարք մը պատիւ կ'ընէ ժամանող հիւրերուն (եթէ կան):

Ըստ երկրի սովորութեան, սկաուտական շարքը պարտաւոր է պատուի կենալ կազմակերպող մարմինի ատենապետին, գերադաս մարմիններու ներկայացուցիչներուն եւ պատուոյ հիւրերուն:

Ըստ յարմարութեան, փողերախումբը տեղ կը գրաւէ մուտքի դրան աջ կամ ձախ կողմը:

Փողերախումբը կը նուազէ ի պատուի՝ հետեւեալ հիւրերուն.-

- ◆ Օրուան հովանաւորին կամ ներկայացուցիչին,

- ◆ Օրուան նախագահին կամ ներկայացուցիչին,

- ◆ Վեհափառին կամ Առաջնորդ Սրբազանին,

- ◆ Պետական երեսփոխաններուն, նահանգապետներուն եւ քաղաքապետներուն,

- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն մարմինի ատենապետին կամ ներկայացուցիչին,

- ◆ Երկրի սկաուտական գերագոյն խմբապետին:

Օրուան հովանաւորի կամ նախագահի ժամանումէն ետք փողերախումբով պատիւ չի տրուիր որեւէ պատճառով ուշացած պատուոյ հիւրերուն:

Բ. ՊԱՏՈՒՈՅ ԹՐԻՊԻԻՆԻ

ՓՐՈԹՈՔՈԼԱՅԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ

Օրուան հովանաւորը կամ նախագահը (Վեհափառ, նախագահ, առաջնորդ սրբազան, վարչապետ, երեսփոխան, Հ.Ս.Ը.Ս.ի գերագոյն մարմինի ներկայացուցիչ եւ այլն) կը գրաւէ պատուոյ թրիպիւնին առաջին շարքին կեդրոնական աթոռը:

Հովանաւորին աջ կողմը կը նստի օրուան երկրորդ կարեւորագոյն պատուակալ հիւրը, իսկ երրորդ կարեւորագոյն անձը՝ ձախ կողմը, եւ այսպէս յաջորդաբար՝ նահանգապետ, քաղաքապետ եւ այլն:

Նուիրապետական կարգը յարգելով՝ Հ.Յ.Դ.ի ներկայացուցիչը կամ ներկայացուցիչները Ա. շարքի հիւրեր կը նկատուին: Հովանաւորէն կամ նախագահէն անմիջապէս ետք, օրուան կարեւորագոյն հիւրերը պէտք է նկատել Հ.Ս.Ը.Ս.ի գերագոյն մարմինի ներկայացուցիչը (համագաղութային, շրջանային կամ մասնաճիւղային առումով) եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան ներկայացուցիչը:

Ձեռնարկ կազմակերպող մարմինին ներկայացուցիչը միայն Ա. շարքի մէջ տեղ կ'ունենայ, իսկ մնացեալ անդամները կը նստին երկրորդական շարքերու վրայ:

Թրիպիւնի Բ. շարքի աթոռները կը տրամադրուին Հ.Ս.Ը.Ս.ի գերագոյն մարմինի եւ այլ կեդրոն-

նական մարմիններու անդամներուն կամ կարելոր հիւրերուն, ինչպէս նաեւ՝ «Արժանեաց» շքանշանակիրներու եւ Ա. շարքի կեդրոնի պատուոյ հիւրերու կողակիցներուն:

Թրիպիւնի Գ. շարքէն սկսեալ պէտք է տեղաւորուին օտար կամ հայ հիւրեր՝ իրենց հանգամանքներու կարելորութեան կարգով:

Թրիպիւնի մէջ բացակայող հիւրերուն աթոռները կամ կը վերցուին, կամ կը յատկացուին այլ յարմար անձի մը, որպէսզի պարապ աթոռ չմնայ:

Գ. ԴՐՕՇԱԿՈՎ ՏՈՂԱՆՑՔ ԵՒ ԴՐՕՇԱԶԱՐԴԱՐՈՒՄ

Տողանցքի կամ այլ ձեռնարկի առթիւ, երկրին դրօշակը միշտ նախապատիւ տեղ կը դրուի:

Երեք դրօշակներու պարագային, մէջտեղը՝ երկրինը, աջ կողմը՝ ազգայինը, իսկ ձախ կողմը՝ Յ.Մ.Ը.Մ.ինը. վերջին երկուքը քայլ մը ետ պարզուած: Կամ շեղ գիծով՝ առաջին տեղը կը գրաւէ երկրի, երկրորդ՝ ազգային, իսկ երրորդ՝ Յ.Մ.Ը.Մ.ի դրօշակը (նոյն չափերով):

Դրօշազարդարունի պարագային, երկրի, ազգային եւ Յ.Մ.Ը.Մ.ի դրօշակները հաւասար թիւով պէտք է ըլլան:

Միջ-ազգային ձեռնարկի մը պարագային, նախապատիւ դիրքը կը տրուի հիւր երկրի դրօշակին:

2. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ՝ ՄՐԱՀԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ

Սրահի մէջ տեղի ունեցող հանդիսութեան մը առթիւ, լրիւ ի զօրու են դաշտի մէջ նախատեսուած ձեռնարկի մը համար սահմանուած փրոթոքոլային կանոնները:

3. ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԻՒՆ

Դաշտի թէ սրահի մէջ տեղի ունեցող հրապակային մեծ տարողութեամբ ձեռնարկներու հովանաւորութեան գծով պէտք է պահել նուիրապետական օրինաչափութիւնը, հետեւեալ կարգով.-

Նկատի ունենալով Միութեան համա-Յ.Ս.Ը.-Մ.ական կառոյցը:

◆ Կեդրոնական վարչութեան ձեռնարկ՝ Վեհափառ Հայրապետ կամ պետական բարձրաստիճան անձնաւորութիւն մը:

◆ Շրջանային վարչութեան ձեռնարկ՝ Առաջնորդ Սրբազան կամ Կեդրոնական վարչութիւն:

◆ Մասնաճիւղի վարչութեան ձեռնարկ՝ Հայաստանեաց եկեղեցւոյ աստիճանաւոր, քաղաքապետ կամ Շրջանային վարչութիւն:

◆ Շրջանային յանձնախումբերու ձեռնարկ՝ Շրջանային վարչութիւն:

♦ Մասնաճիւղի յանձնախումբերու ձեռնարկ՝
Մասնաճիւղի Վարչութիւն:

4. ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Հրապարակային ձեռնարկի մը պարագային, հովանաւորէն ետք, օրուան երկրորդ հիւր անձնաւորութիւնը նախագահն է:

5. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

Ձեռնարկի մը առթիւ, մամուլին տրուած յայտարարութեան մէջ պէտք է յարգուի հետեւեալ կարգը.-

Ա.) հովանաւոր

Բ.) նախագահ

Գ.) կազմակերպութիւն

Տեղական բնոյթ կրող ձեռնարկի մը սկիզբը կը հնչեն նախ երկրին քայլերօր, ապա՝ ազգային քայլերօր, իսկ միութեան քայլերօր՝ փակման:

Միջ-ազգային բնոյթ ունեցող (սրահի թէ դաշտի մէջ) ձեռնարկի մը պարագային, փողերախումբը կը հնչեցնէ հիւր խումբին երկրին քայլերօր, ապա՝ երկրին քայլերօր:

Մրցումները եթէ միջ-ազգային բնոյթի են, նախ կը հնչէ հիւր երկրի, ապա՝ հիւրընկալ երկրի ազգային քայլերօրները:

Մրցումները եթե տեղական բնույթի են, կը հնչէ միայն երկրի քայլերգը:

Խօսք առնողներու կարգ. բացման խօսքը հակիրճ կերպով կ'ընէ ձեռնարկը կազմակերպող մարմինը. եթէ կայ՝ գեղարուեստական յայտագիրը մէջընդմէջ կը գործադրուի, բանախօսին կամ բանախօսներուն խօսք կը տրուի ձեռնարկին բնույթին յարմարող կարգով: Փակման խօսքը կ'արտասանէ հովանաւորը, նախագահը կամ ձեռնարկը վարողը: Փակման խօսքէն ետք այլեւս կարելի չէ ուրիշ մէկու մը խօսք տալ:

Խօսքերու շարքը կը տրուի ստորադասէն գերադաս մարմիններու յաջորդականութեամբ:

Շքանշաններու տուչութեան արարողութեան, հարկ է որ պարգեւատրման ընթացքին ներկաները յոտնկայս յարգեն պարգեւատրեալը, նոյնպէս՝ յետ մահու, եթէ ննջեցեալ եղբօր կամ քրոջ դագաղին վրայ կը զետեղուի շքանշանը, կամ կը յանձնուի անոր մէկ հարազատին, յարգելու համար անոր յիշատակը:

Իւրաքանչիւր ձեռնարկ՝ դաշտային թէ հրապարակային, ինչպէս նաեւ պսակադրութեան եւ յուղարկաւորութեան արարողութիւններ, կ'ունենան իրենց փրոթօքոլային յանձնախումբը կամ պատասխանատուն, որ կը հսկէ աշխատանքներու անթերի գործադրութեան:

ՀՔԱՆՀԱՆՆԵՐՈՒ
ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ



Արտակարգ
Պատուանշան

Ծառայութեան
Շքանշան

Արժանեաց Շքանշան

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իր տասնեակ տարիներու կեանքի ընթացքին, միութեան ծառայողները պարգևատրած է զանազան շքանշաններով:

Այս որոշման միջոցաւ, կը համադրուին ներկայիս գոյութիւն ունեցող շքանշանները եւ անոնց տուչութեան պայմանները:

Ներկայիս գոյութիւն ունեցող շքանշաններն են.-

Ծառայութեան շքանշան,

Արտակարգ պատուանշան,

Արժանեաց շքանշան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՀԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի «Ծառայութեան»
շքանշանը հաստատուած է
Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչու-
թեան 7 Փետրուար 1986ի նիս-
տին:



Յօդ. 1 - Հ.Մ.Ը.Մ.Ի «Ծառայութեան» շքանշանը
կը փրուի Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային եւ Մեկուսի
շրջաններու Վարչութիւններուն կողմէ:

Յօդ. 2 - Հ.Մ.Ը.Մ.Ի «Ծառայութեան» շքանշա-
նին հետ կը յանձնուի համապատասխան լամբա-
կի պէճ եւ հաստատագիր, որ կը կրէ վարչութեան
կնիքը, արենապետին եւ արենադպիրին ստոր-
ագրութիւնները, պարգեւատրման որոշումի
թուականը:

Յօդ. 3 - Շքանշանը փուող Վարչութիւնը յափուկ
ոսկեմատեանի մէջ կ'արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.Ի
«Ծառայութեան» շքանշանին արժանացած անձ-
նաւորութիւններուն անուանացանկը, պարգե-
ւատրման որոշումի թուականը, ինչպէս նաեւ՝
անոնց կենսագրականն ու նկարը:

Յօդ. 4 - Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին կ'արժանանան փիպար եւ օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական անդամներ, որոնք իրենց երկարամեայ գործունէութեամբ օժանդակած են միութեան եւ օգրակար հանդիսացած՝ անոր ամրապնդման, զարգացման ու վերելքին:

Յօդ. 5 - Շրջանային թէ Մեկուսի Վարչութիւնները շքանշանի փուլութեան մասին պարտին իմացնել Կեդրոնական Վարչութեան, որ, իր կարգին, յափուկ շրջաբերականով պարգեւապրումը կը հաղորդէ բոլոր շրջաններուն:

Յօդ. 6 - Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանը եւ հաստատագիրը կը պատրաստուին եւ կը փրամադրուին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

Յօդ. 7 - Կարելի է յետ մահու պարգեւապրել երկարամեայ գործունէութիւն ունեցած եւ Հ.Մ.Ը.Մ.ի ամրապնդման, զարգացման ու վերելքին նպաստած միութենական մը:

Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի «Արտակարգ» պապուանշանի դրուիինը հասարարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, 17 Ապրիլ 1995ին:



Յօդ. 1 - Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը իրեն կը վերապահէ Հ.Մ.Ը.Մ.Ի «Արտակարգ» պապուանշան րալու որոշումը եւ շքանշանը կը յանձնուի իր կամ լիազօր անձի մը կողմէ:

Յօդ. 2 - Հ.Մ.Ը.Մ.Ի «Արտակարգ» պապուանշանին հետ կը յանձնուի համապարասիսան լամբակի պէճ եւ հասարարագիր, որ կը կրէ Կեդրոնական Վարչութեան կնիքը, արենապեպին եւ արենադպիրին սրորագրութիւնները, պարգեւարըման որոշումի թուականը:

Յօդ. 3 - Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը յարուկ մարեանի մէջ կ'արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.Ի «Արտակարգ» պապուանշանին արժանացած ան-

ձերուն անունները, նկարները եւ պարզեւարըրման որոշումի թուականը:

Յօդ. 4 - Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանին կրնայ արժանանալ.-

ա) Հ.Մ.Ը.Մ.ական մը կամ միութեան բարեկամ մը, որ իշխանական նուիրապրութիւն կատարած է Հ.Մ.Ը.Մ.ին:

բ) Հայ կամ օտար անձնաւորութիւն մը, որ թանկագին ծառայութիւն մատուցած է Հ.Մ.Ը.Մ.ին:

Յօդ. 5 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանով կրնայ պարգեւատրել.-

ա) Իր նախաձեռնութեամբ. այս պարագային անհրաժեշտ է նախապէս տեղեակ պահել պարգեւատրեալին բնակած երկրին Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւնը:

բ) Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան դիմումով. այս պարագային անհրաժեշտ է որ առաջարկին կցուած ըլլան ենթակային կենսագրութիւնը եւ «Արտակարգ» պատուանշանին պարգեւատրումին յատուկ դիմումնագիրը, որ իբրեւ «Յաւելուած» մաս կը կազմէ այս կանոնագրութեան:

Յօդ. 6 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը «Արտակարգ» պատուանշանով պարգեւատրուած անձին անունը կը հրատարակէ իր պաշտօնաթերթին մէջ, հայ մամուլով, նաեւ յատուկ շրջաբերականով կը յայտնէ Շրջանային եւ մեկուսի վարչութիւններուն, որոնք իրենց կարգին կը փոխանցեն մասնաճիւղերուն եւ շարքերուն:

Յօդ. 7 - Կարելի է յետ մահու պարգեւատրել թանկագին ծառայութիւն մատուցած անձնաւորութիւն մը:

Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԺԱՆԵԱՑ» ՀՔԱՆՀԱՆ

Համաձայն Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. Ընդհանուր Ժողովի թելադրանքին (Դեկտեմբեր 1974, Պէյրուժ) եւ Կեդրոնական Վարչութեան որոշումին (29րդ նիստ, 22 Փետրուար 1976), կը հաստատուի Հ.Մ.Ը.Մ.Ի «Արժանեաց» շքանշանի դրութիւն:



Յօդ. 1 - Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը իրեն կը վերապահէ Հ.Մ.Ը.Մ.Ի «Արժանեաց» շքանշան տալու որոշումը եւ շքանշանը կը յանձնուի իր կամ լիազօր անձի մը կողմէ:

Յօդ. 2 - Հ.Մ.Ը.Մ.Ի «Արժանեաց» շքանշանին հետ կը յանձնուի համապատասխան լամբակի պէճ եւ հաստատագիր, որ կը կրէ Կեդրոնական Վարչութեան կնիքը, արեւնապետին եւ արեւադրապիրին ստորագրութիւնները, պարգեւատրման որոշումի թուականը:

Յօդ. 3 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը յարուկ ոսկեմապեանի մէջ կ'արձանագրէ Հ.Մ.Ը.-Մ.ի «Արժանեաց» շքանշանին արժանացած անձերուն անունները, նկարները եւ պարգեւաբրդման որոշումի թուականը:

Յօդ. 4 - Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանին կրնայ արժանանալ երախտապարտ Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ միութենէն ներս ունեցած է երկարամեայ ծառայութիւն, սաքարած է միութեան ամրապնդման, զարգացման կամ իր սկաութական, մարզական եւ կազմակերպչական բեղուն գործունէութեան ընթացքին հանդիսացած է փապար եւ օրինակելի:

Յօդ. 5 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեանց» շքանշան կրնայ պարգեւաբրել.-

ա) Իր նախաձեռնութեամբ. այս պարագային անհրաժեշտ է նախապէս փեղեակ պահել պարգեւաբրելային բնակած երկրին Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւնը:

բ) Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան դիմումով. այս պարագային անհրաժեշտ է որ առաջարկին կցուած ըլլան ենթակային կենսագրութիւնը եւ «Արժանեաց» շքանշանին պարգեւաբրումին յարուկ դիմումնագիրը, որ իբրեւ «Յաւելւած» մաս կը կազմէ այս կանոնագրութեան:


Յօդ. 6 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը «Արժանեաց» շքանշանով պարգևատրուած անձին անունը կը հրատարակէ իր պաշտօնաթերթին մէջ, հայ մամուլով, նաեւ յապուկ շրջաբերականով կը յայտնէ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն, որոնք իրենց կարգին կը փոխանցեն մասնաճիւղերուն եւ շարքերուն:

Յօդ. 7 - Կարելի է յետ մահու պարգևատրել երկարամեայ ծառայութիւն ունեցած եւ Հ.Մ.Ը.Մ.ի ամրապնդման, զարգացման ու վերելքին սարար հանդիսացած միութենական մը:

ԾԱՆՕԹ.- Սոյն կանոնադրութեան հրատարակման թուականէն առաջ, ոսկի կամ արծաթ շքանշանով պարգևատրուած եղբայրները եւ քոյրերը կը նկատուին «Արժանեաց» շքանշանի արժանացածներ:

Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ
Դ Ի Մ Ո Ւ Մ Ն Ա Գ Ի Ր

Յաւելուած



1.- Պարզեապրեալի ինքնութեան ճշդում

- ◆ Շրջան
- ◆ Մասնաճիւղ
- ◆ Անուն
- ◆ Մականուն
- ◆ Ծննդեան թուական եւ վայր
- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցութեան թուական
- ◆ Գործի ասպարէզ
- ◆ Միութեան բարեկամ, ոչ անդամ
- ◆ «Ծառայութեան» շքանշանի տուչութեան թուական (ի հարկին)
- ◆ Անբողջական հասցէ
-
- ◆ Հեռաձայն
- ◆ Բջիջային
- ◆ E-mail

2.- Պարզեապրեալի կենսագրութիւնը արդարացնող բացաբրողագիր

Նկարագրել հետեւեալ կէտերը.-

ա) Յիշել փոքր տարիքէն մինչեւ օրս, իր սկա-
նութեան, մարզական եւ վարչական գործունէու-
թեանց տարիներն ու ստանձնած պաշտօնները.

բ) Յաճախած վարժարաններն ու ստացած
բարձրագոյն վկայականը. (ըստ փափաքի)

գ) Թուել ստանձնած պաշտօնները՝ գաղութա-
յին եւ ի հարկին օտար շրջանակներէ ներս. նշել
թուականները.

դ) Ինչպէ՞ս կ'արժեւորէք իր բերած բարոյական ներդրումը՝

1-Միութեանս ամրապնդման եւ հզօրացման մարզերուն մէջ,

2-Քաղութիս զարգացման զանազան ծրագիրներուն մէջ:

Տալ օրինակներ՝ նշելով թուականները.

ե) Որպէս փիլպար, օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական եւ երկրի փիլպար քաղաքացի, որքանո՞վ մասնակից եղած է եւ սատարած իր շրջապատին:

Տալ օրինակներ՝ նշելով թուականները.

զ) Ինչպէ՛ս կը գնահատէք միութեան բարեկամ, կամ ոչ հայ անձնատրութեան մը թանկագին ծառայութեան կամ պարկառելի նուիրապրութեան ներդրումը.

.....
.....
.....
.....
.....

է) Այլ նախաձեռնութիւններ.

.....
.....
.....
.....
.....

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային կամ
Մեկուսի Վարչութիւն

Արեւնադպիր՝


Արեւնապետ՝

.....

Թուական, .../.../.....

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԺԱՆԵԱՅ ՇՔԱՆՇԱՆԻ
Դ Ի Մ Ո Ի Մ Ն Ա Գ Ի Ր

Յաւելուած



1.- Պարզեապրեալի ինքնութեան ճշդում

- ◆ Շրջան
- ◆ Մասնաճիւղ
- ◆ Անուն
- ◆ Մականուն
- ◆ Ծննդեան թուական եւ վայր
- ◆ Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցութեան թուական
- ◆ Գործի ասպարէզ
- ◆ Միութեան բարեկամ, ոչ անդամ
- ◆ «Ծառայութեան» շքանշանի տուչութեան թուական (ի հարկին)
- ◆ Անբողջական հասցէ
- ◆ Հեռաձայն
- ◆ Բջիջային
- ◆ E-mail

2.- Պարզեապրեալի կենսագրութիւնը արդարացնող բացաբրողագիր

Նկարագրել հետեւեալ կէտերը.-

ա) Յիշել փոքր տարիքէն մինչեւ օրս, իր սկաու-
տական, մարզական եւ վարչական գործունէու-
թեանց տարիներն ու ստանձնած պաշտօնները.

բ) Յաճախած վարժարաններն ու ստացած
բարձրագոյն վկայականը. (ըստ փափաքի)

գ) Թուել ստանձնած պաշտօնները՝ գաղութային
եւ ի հարկին օտար շրջանակներէ ներս. նշել
թուականները.

դ) Ինչպէ՞ս կ'արժեւորէք իր բերած բարոյական
ներդրումը՝

1- Միութեանս ամրապնդման եւ հզօրացման
մարզերուն մէջ,

2-Գաղութիս զարգացման զանազան ծրագիրներուն մէջ:

Տալ օրինակներ՝ նշելով թուականները.

.....
.....

ե) Որպէս տիպար, օրինակելի Հ.Մ.Ը.Մ.ական եւ երկրի տիպար քաղաքացի, որքանո՞վ մասնակից եղած է եւ ստարած իր շրջապատին:

Տալ օրինակներ՝ նշելով թուականները.

.....
.....

զ) Այլ նախաձեռնութիւններ.

.....
.....

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային կամ
Մեկուսի Վարչութիւն

Արեւադպիր՝

Արեւապետ՝

.....

.....

Թուական,/..../.....

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ական Կենցաղագիրության եւ
Փրոթոքոլային Հասկացողության Ուղեցոյց

♦ Նախաբան	3
-Ա. Սիուրենական ներքին կեանքի փրոթոքոլային համակարգ	5
♦ Յարաբերական	6
♦ Ընդհանրական երեւոյթներ	7
-Բ. Սիուրենական արտաքին կարգի փրոթոքոլային համակարգ	8
1. Հրապարակային՝ դաշտային ձեռնարկ	8
Ա. Դաշտի մուտքի փրոթոքոլային կարգ ու կանոն	8
Բ. Պատուոյ թրիպիւնի փրոթոքոլային կարգ ու կանոն	10
Գ. Դրօշակով փողանցք եւ դրօշագարդարում	11
2. Հրապարակային՝ սրահային ձեռնարկ	12
3. Հովանաւորութիւն	12
4. Նախագահութիւն	13
5. Ընդհանրական	13
♦ Շքանշաններու Կանոնագրութիւն	
Հ.Մ.Ը.Մ.ի Ծառայութեան շքանշան	17
Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշան	19
Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշան	22
♦ Յաւելուած	
Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանի դիմումնագիր	25
Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանի դիմումնագիր	29

